

քունի խորհրդականն ի դրան Բասքելիչին. ծանօթ անդդիացի եւ գաղիացի եւ ռուս բարբառոյ, թող եւ զիտալերէնն եւ զայլս: Եւ ի տեղափոխել ժողովրդեանս մին էր ի շորից խորհրդականաց հրամայելոց ի Կոստէն վասն այլս: Շնորհէ սմա Բասքելիչ պատիւ եպիսկոպոսութեան, որոյ յամսեանն մայիսի գնացեալ յէջմիածին ձեռնադրի եպիսկոպոս, եւ դառնայ ըստ հրամանին ընդունելոյ ելանել յայց եւ ի քննութիւն վիճակի նորեկ ժողովրդոց: Շրջեալ կարգաւ եհաս այժմ ի քաղաքս: Յետ ի գլուխ հանելոյ զգործն կարծեմ ակն ունի հասանել դատարկ Աթոռոյ Թիֆլիզու:

Միւս եւս կարեւորի ի գիտել, թէպէտեւ ցաւայի, է դժնդակ ախտն խանձեալ ի Թիֆլիս եւ անտի տարածեալ յաշխարհն Վրաց, կոչեցեալ Եանը Գարա կամ... [մեկ բառ անընթեռնելի] պատճառել յօդոյն ապակեանութենէ, կամ ի տապոյ խորշակէ, որ ընդ հարկանելն եւ զպանանէ զմարդ, վարակեալ հրով ջերմութեամբ եւ թուլութեամբ. եւ զմարմինն սեւա ներկէ. միայն զի չէ փոխադրական: Հազարք մեռան ի Թիֆլիս, եւ այլքն առհասարակ փախեան ի գիւղօրէս, դատարկ լքեալ զքաղաքն, մինչեւ փոփոխեսցի օդ եւ շունչ տեղւոյն:

Շատ իսկ ձանձրացուցի զերկայնամտութիւնդ երկարաբանութեամբս. վասն որոյ դադար տուեալ եւ պատուով ողջունեալ զյարգոյ վերապատուեալ վարդապետս մեր, խոնարհ համբուրիւ շնորհաբաշխ աջոյդ, մնամ

Ակնարկութեան սրբութեանդ
խոնարհ ծառայ եւ որդի
Հ[այր] ԵՓՐԵՄ Սէթ:

Հ. Գ. Խոնարհ աղաչանօք ծանուցանեմ սրբութեանդ, զի յետ առաջնորդելոյ իմոյ ժողովրդեան ցայս վայր եւ հասանելոյ իմ ի քաղաքս, հին եւ նոր ժողովուրդն եւ քահանայք միաբերան պնդեն ինձ չեղանել ինձ աստի, եւ խորհին զգործ մեծաւորութեան ի գլուխ իմ հանել, եւ արքունի ուժով արգելուլ զիս իմ ի քաղաքէս: Ես առ ժամս պատ ի պատ բանիւք զնամ ընդ նոսա զի մի խոստացուցից զպնդութիւն կամաց սոցա, եւ մնամ մինչեւ հասցեն ինձ օգնականք, որպէսզի առանց դժուարութեան յաջողեսցի ինձ հնախնդիր ճանապարհորդութիւնս: Վասն որոյ գրեցի առ Հ[այր] Եսայի¹⁴ փութալ հասանել առ իս, եւ դարձեալ սպասեմ անձկանօք օժանդակս մեզ տեսանել յղեալս է Վեհէդ: Միանգամայն շնորհս առնէք գրել ինձ թուղթ խստագոյն բանի որպէս թէ տարապարտ զեզերիցիմ ի գործս քաղաքականս արտաքոյ հրամայեալ հնազանդութեանս եւ գործոյ յանձնելոյ ինձ: Որպէսզի յայտնի ցուցեալ նոցա զայդ զիր թափեցից զանձն իմ ի բռնադատութենէ նոցա: Իսկ ի հասանել օգնականաց մարթասցուք հիմնել զպրոց օրինաւոր, եւ առանց բանի մեծաւորութեան կրթել զսիրտս նոցա: Առ ժամս այսչափ, յանձնելով զբովանդակն ի մատակարարութիւնդ Հոգեւոր Տեառնդ:

Մտայ եւ որդի
Հ[այր] ԵՓՐԵՄ Սէթ:

¹⁴ Եսայի վարդապետ Մղրաբլան—Միտիթարլան Միարանութլան վարդապետներից, ծընվել է Կ. Պոլսում 1801 թ. հունվարի 8-ին, քահանայական ձեռնադրութիւնը ստացել էր 1823 թ. նոյեմբերի 9-ին, վախճանվել է 1859 թ. հուլիսի 9-ին Բոմբեյում: